ԳԼՈՒԽ Դ.

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Իրերի բերումով, արևմտահայերի և ռուսահայերի կեանքը յեղափոխութիւնից յետոյ գնաց տարբեր ճանապարհներով: Արևմտահայերը ապրում էին սեփական, ազգային-տեղական կեանքով. նրանց հետաքրքրութիւնը ամփոփուած էր Թիւրքահայաստանի և գաղթականական գործերի սահմաններում: Ռուսահայութիւնը, ընդհակառակը, ամբողջապէս տարուեց համապետական ընդհանուր հարցերով և ընկերային գաղափարներով: Յեղափոխութեան մրրիկը յափշտակեց նրան և մի պահ մոռացնել տուեց զուտ ազգային ցաւերը:

Ռուսահայոց ակնկալութիւնները յեղափոխութիւնից ամբողջապէս տեղաւորուում էին Ռուսաստանի համապետական հարցերի մէջ — նոր՝ ժողովրդական իշխանութեան հաստատում, հին ռեժիմի մնացորդների վերացում, ընդհանուր ներում, քաղաքացիական ազատութիւններ, ռազմաճակատի ամրացում ու պատուաւոր հաշտութիւն Եայլն. այս վերջին պահանջի մէջ հասկացւում էր և Թիւրքահայաստանի ինքնավարութիւնը: Եւ, իրրև ազգային պահանջ, մանր ազգերին էս տալ այն իրաւունքները, որոնք մինչև այդ վերապահուած էին միայն տիրող ցեղին:

Նոյն ոգին տեսնում ենք և մայիս ամսի ընթացքին դումարուած գաւառական ու նահանգային ուսուցչական և գիւղացիական բազմաթիւ համագումարների մէջ — Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում և այլուր: Ամէն տեղ դրւում էին ընդհանուր-պետական խնդիրներ, իսկ տեղական-ազգային պահանջները դուրս չէին գալիս լեզուի և տեղական մշակոյթի համեստ սահմաններից:

Նմոյշի համար՝ ահա Երևանի նահանգային գիւղացիական համագումարի մայիս 12-ի նիստում, Ա. Շահխաթունեանի զեկուցումից յետոյ ընդունուած բանաձևը, որ տիպար կարող է համարուել և միւս համագումարների բանաձևերի համար և որը լիովին արտայայտում է ռուսահայերի ա՛յն օրերի քաղաքական ապրումները.

«Երևանի Նահանգի Գիւղացիական Համագումարը՝ քննելով Ռուսաստանի ապագայ կարգերի խնդիրը, գտնում է.

Ռուսաստանում վերջնականապէս ոչնչացուած է հին կարգը և նրա տեղ պէտք է հաստատուի հանրապետութիւն: Այդ հանրապետութիւնը պէտք է լինի ռամկավար, որովհետև միայն ռամկավար հանրապետութեան մէջ կարող է աշխատաւոր ժողովուրդը իր շահերը պաշտպանել:

Այդ ռամկավար հանրապետութիւնը պէտք է լինի դաշնակցական,